

ԵՐԵՎԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ

**ԿՈՒ ԲԱՆՅԱՆ ԱՆՆԱ ՍԱՄՎԵԼԻ**

**«ԱՍՏՎԱՃ» ԵՎ «ՍՍՏԱՆԱ» ԲԱՂԱԴՐԻՉՆԵՐՈՎ  
ԴԱՐՁՎԱՃՔՆԵՐԻ ԻՄԱՍՏԱԿԱՌՈՒ ՑՎԱՃՔԱՅԻՆ  
ԱՌԱՆՁՆԱՅ ԱՏԿՈՒ ԹՅՈՒՆՆԵՐՆ ԻՍՊԱՆԵՐԵՆՈՒՄ  
ՀԱՅԵՐԵՆԻ ՉՈՒԳԱԴՐՈՒ ԹՅԱՄԲ**

Ժ.02.08 – «Ռոմանական և եզոկներ»  
մասնագիտությունը ամբիոնական  
գիտությունների թեկնածուի  
գիտական աստիճանի հայցման  
ատենախոսություն

ՍԵՂՄԱԳԻՐ

ԵՐԵՎԱՆ - 2016

Ատենախոսությունը թեման հաստատվել է Երևանի պետական  
համալսարանում:

Գիտական ղեկավար՝

բ.գ.թ., դոցենտ Յ.Գ.

Բաղդասարյան

Պաշտոնական ընդդիմախոսներ՝

բ.գ.դ., պրոֆեսոր Ա.Կ.

Բարլեգիզյան

բ.գ.թ., դոցենտ Յ.Լ. Օհանյան

Առաջատար կազմակերպչություն՝

Խ. Աբովյանի անվ.

հայկական

պետական մանկավարժական

համալսարան

Ատենախոսությունն պաշտպանությունը կայանալու է 2016թ. սեպտեմբերի 28-ին ժամը 11:00-ին՝ ՀՀ ԲՈՅ-ի՝ Երևանի պետական համալսարանում գործող 009 «Օտարլեզուներ» մասնագիտական խորհրդի նիստում (հասցե՝ Երևան, Ալեք Մանուկյան 1):

Ատենախոսությունը կարելի է ծանոթանալ ԵՊՀ գրադարանում:

Սեղմագիրն առաքվել է 2016թ. օգոստոսի 26-ին:

Մասնագիտական խորհրդի

գիտական

բ.գ.դ., պրոֆեսոր՝

քարտուղար,

Ե.Լ. Երզնկյան

**Ատենախոս**

**Վանուրբնութագիրը**

Դարձվածքները ժողովրդի հոգևոր մշակույթի հարստությունն են: Դարձվածքներում բյուրեղված են ժողովրդի բազմադարյան փորձը, նրա առօրեական

իմաստու թյուռը, արժեհամակարգը, վարքի կաղապարները, բարոյական, գեղագիտական և կրոնական պատկերացումները, հոգեկերտվածքի ու աշխարհայացքի արանձնահատկությունները: Դարձվածքներում վառ կերպով արտացոլվում են նաև տարբեր ժողովուրդներին լեզվամտածողության և աշխարհագրացողության ընդհանրություններն ու տարբերությունները, որոնք պայմանավորված են տարբեր լեզվական և արտալեզվական գործոններով: Հանդես գալով լեզվի գործածության ամենատարբեր բնագավառներում՝ դարձվածքները լեզվին հաղորդում են ինքնատիպություն:

«Dios» (աստված) և «diablo» (սատանա) բաղադրիչները իսպաներենում և հայերենում ունեն դարձվածակազմական մեծ ներուժ: Որպես կրոնական ծագում ունեցող հասկացություններ՝ վերջիններս համարվում են նաև համամարդկային մշակույթի բաղկացուցիչ մաս, թեև յուրաքանչյուր լեզվամշակույթում արանձնանում են իրենց ուրույն դրսևորումներով:

Ներկա առեսախոսությունը նվիրված է իսպաներենում «dios» (աստված) և «diablo» (սատանա) բաղադրիչներով դարձվածային միավորների իմաստակառուցվածքային արանձնահատկությունների քննությանը՝ հայերենի գուգադրությունամբ: Որպես ուսումնասիրության **առարկա՝** «dios» և «diablo» բաղադրիչներով դարձվածքների ընտրությունը պայմանավորված է նրանով, որ նշված միավորները լեզվի դարձվածային համակարգում արանձնանում են գործածության մեծ հանասականության և հաղորդակցական մեծ ներուժով: Այդ դարձվածքներն աչքի են ընկնում արավել մեծ արտահայտչականության և պատկերավորության ամբ, քանի որ «dios» և «diablo» բաղադրիչները՝ որպես գերբնական էակներ, արասպելական կերպարներ մատնանշող միավորներ, արդեն իսկ ենթադրում են փոխաբերական լայն կիրառություն, որը դարձվածքի գոյության նախապայմաններից է: Նշված բաղադրիչները լայն կիրառություն ունեն իսպաներենի դարձվածային միավորներում և վառ կերպով արտացոլում են սովորույթների, բարոյականության, վարք ու բարքի վերաբերյալ ազգային պատկերացումները: «Dios» և «diablo» բաղադրիչներով դարձվածային միավորները հանդես են գալիս որպես աշխարհընկալման լեզվամշակութային կարծրատիպեր, որոնք հնարավորություն են ընձեռում ուսումնասիրելու սվյալ ժողովրդի աշխարհաճանաչողության արանձնահատկությունները: Տվյալ ուսումնասիրության մեջ հայերենի փաստական նյութի ներգրավումը հնարավորություն

Ե տալիս վեր հանելու նշված դարձվածքների իմաստային դաշտերում առկա ընդհանրություններն ու տարբերությունները՝ հատկապես, որ համընդհանուրն ու ազգայինը դարձվածքներում հանդես են գալիս սերտորեն միահյուսված և կազմում են մի ընդհանուր դիպեկտիկական միասնությունն. ընդհանուրն արտահայտվում է բովանդակության պլանում, ազգայինը՝ դարձվածքի ներքին ձևում: Բացի այդ, մայրենի լեզվի յուրահատկություններին հենքի վրա իսպաներենի դարձվածքների քննությունը օգնում է տեսանելի դարձնելու իսպաներենի դարձվածքների բնութագրական գծերը և վեր հանելու դրանց առանձնահատկությունները:

«Dios» և «diablo» բաղադրիչներով դարձվածային միավորների ուսումնասիրության **արդիականությունը** պայմանավորված է լեզվի և մտածողության փոխհարաբերության, դարձվածային միավորների կառուցվածքամաստային և լեզվամշակութային առանձնահատկությունների, խոսքում դրանց իմաստային բովանդակության փոփոխությունների և դիպեկտիկ տարբերակայնության խնդիրների նկատմամբ անող հետաքրքրությամբ, որը համահունչ է դարձվածքանության զարգացման արդի միտումներին:

Լայն առումով, հետազոտության **նպատակը** «dios» և «diablo» բաղադրիչներով դարձվածային միավորների համակողմանի քննությունն է լեզվի տարբերմակարգակներում, ինչպես նաև խոսքում դարձվածային փոխակերպումների ուսումնասիրությունը ինչպես իմաստային, այնպես էլ կառուցվածքային տեսանկյունից, ներուսակ իմակների բացահայտումը՝ ելնելով տեքստի հեղինակի հաղորդակցական դիտավորությունից: Այս նպատակն իրականացնելու համար աշխատանքում առաջարկվել են հետևյալ կոնկրետ **խնդիրները**.

ա) համակողմանիորեն քննության ենթարկել դարձվածքի ըմբռնման և դասակարգման սկզբունքների վերաբերյալ լեզվաբանական գրականության մեջ առկա գիտական մոտեցումները, որոնք կարող են տեսական հիմք ծառայել տվյալ առենախոսական ուսումնասիրության համար,

բ) քննության ենթարկել իսպաներենի դարձվածային միավորների կառուցվածքային-ձևաբանական և շարահյուսական կաղապարները՝ հայերենի համապատասխան կաղապարների գույքարդյունքով,

գ) քննել «dios» և «diablo» բաղադրիչներով դարձվածային միավորների իմաստային վերափոխման

առանձնահատկությունները իսպաներենում՝ հայերենի գուգադրությունամբ,

դ) վեր հանել, ուսումնասիրել և համեմատել իսպաներենում և հայերենում «dios» և «diablo» բաղադրիչներով դարձված ակադամական իմաստային կաղապարները,

ե) քննությունն առնել «dios» և «diablo» բաղադրիչներով դարձված այլևս միավորների տարբերակայնություն, հոմանիշություն և բազմիմաստություն համակարգային կապերը իսպաներենում և հայերենում,

զ) քննել և վեր հանել «dios» և «diablo» բաղադրիչներով կազմված դարձվածային միավորների ազգամշակութային առանձնահատկությունները,

է) քննությունն առնել «dios» և «diablo» բաղադրիչներով դարձված այլևս միավորների դիվիզիոնային փոխակերպման հնարավորությունները խոսքում՝ գրական-գեղարվեստական հարուստ լեզվանյութի հիման վրա:

Ուսումնասիրությունն **գիտական նորույթը** նախ և առաջ պայմանավորված է դարձվածքների ուսումնասիրությունն լայն մեթոդաբանական մոտեցմամբ: Առաջին անգամ փորձ է արվում համակողմանիորեն քննությունն առնել իսպաներենի «dios» և «diablo» բաղադրիչներով դարձված այլևս միավորները՝ կիրառելով արդի դարձվածաբանությունն բնագավառում առկա գիտական տեսությունները լայն ընդգրկումով: Իսպանական դարձվածաբանությունն մեջ առաջին անգամ է ներկայացվում դարձվածքների իմաստային վերափոխման համակողմանի քննությունն, ինչպես նաև կիրառվում դարձվածքների իմաստային կաղապարման՝ ԱՌայ խշտեյնի առաջարկած մեթոդը, որը փաստում է դարձվածային միավորների համակարգայնությունամբ ընձեռված հնարավորությունն արդյունավետ կիրառությունը: Իսկ հայերենի փաստական նյութի ընդգրկումը թույլ է տալիս առաջին անգամ վեր հանել ու համընդհանուրի և ազգայինի դրսևորումները երկու լեզուների դարձվածապաշարում:

Աշխատանքի **տեսական արժեքը** պայմանավորված է ուսումնասիրությունն արդյունքներով, որոնք կարող են ներդրվել իսպաներենի դարձվածաբանությունն առնչվող տարբեր խնդիրների հետազոտությունն սովորականում՝ նպաստելով քննվող լեզուների տիպաբանական, լեզվամշակութաբանական տեսությունների հետազոտարգամանը:

Ուսումնասիրությունն ամեն մի առարկա թելադրում է համապատասխան **մեթոդի** ընտրությունն: Թեև աշխատանքը հիմնականում կատարվել է համաժամանակյա կտրվածքում,

այնուամենայնիվ որոշ լեզվական երևույթների ավելի լայն լուսավորման նպատակով օգտագործվել է նաև տարածման կյանքը լուծող թյունը:

Աշխատության մեջ առաջադրված խնդիրների լուծման համար օգտագործվել են ինչպես ճանաչողության համընդհանուր գիտական, այնպես էլ մասնավոր լեզվաբանական մեթոդներ, որոնք բխում են քննարկվող նյութի առանձնահատկություններից: Ատենախոսության մեջ օգտագործվել են հետևյալ լեզվաբանական մեթոդները. գուգադրական, համատեքստային, բաղադրական և վիճակագրական վերլուծություն մեթոդները:

Աշխատանքի **գործնական նշանակությունն** այն է, որ նրա արդյունքները կարող են կիրառվել իսպաներենի դարձվածքանության, բառագիտության, իմաստաբանության դասընթացների շրջանակում, ելակետ դառնալ կուրսային, ավարտական և մագիստրոսական հետազոտություններում: Հավելվածները կարող են օգտակար լինել բարձրագրական աշխատանքում և թարգմանական արկածային կյանքում:

Ուսումնասիրության **փաստական նյութն** ընդհանուր առմամբ ընդգրկում է 1065 դարձվածք, որոնցից 565-ը իսպաներեն, 481-ը՝ հայերեն: Դարձվածքների ցանկը ներկայացվում է որպես հավելված, որտեղ դարձվածային միավորները տրված են այբբենական կարգով: Աշխատանքի փաստական նյութը հավաքագրվել է իսպանական և հայկական առավել հեղինակավոր բարձրագրական աղբյուրներից, իսկ դարձվածային միավորների դիպվածային փոխակերպման հնարավորությունները ուսումնասիրվել են Միգել դե Սերվանտեսի, Լուիս Վելես դե Գեվալայի, Ֆեռնանդո դե Ռոխասի, Գաբրիել Գարսիա Մարկեսի, Խուան Խոսե Բենիտեսի և ՊարԼագերկվիստի ստեղծագործություններում:

Աշխատանքի **կառուցվածքն ու բովանդակությունը**: Ատենախոսությունը բաղկացած է ներածությունից, հինգ գլխից, եզրակացությունից, մատենագիտական ցանկից և հավելվածներից:

Ներածության մեջ հիմնավորվում է թեմայի ընտրությունը, արդիականությունը, գիտական նորոյթը, տեսական և գործնական նշանակությունը, փաստական նյութը, նշվում են ուսումնասիրության առարկան, նպատակները, գործադրված մեթոդները:

**Առաջին գլխում** («Լեզվաբանական գրականության մեջ դարձվածքի ըմբռնման և դասակարգման սկզբունքների համառոտ ակնարկ») ամփոփ ներկայացվում են դարձվածային միավորների ուսումնասիրության տեսական հիմքերը,

քննու թյան են առնվում դարձվածքներին առնչվող խնդիրները իսպաներենում և հայերենում (դարձվածքի սահմանման, դրա էական տարբերակիչ հատկանիշների, հարակից այլ էգզակական միավորներից դրանք սահմանազատելու և այլ խնդիրներ), որոշարկվում են ուսումնասիրության ելակետային դրույթներն ու մոտեցումները և քննվում են հայտնի դարձվածաբանների և էգզակաբանների (Խ. Կասարես, Ա. Սուլուագա, Գ. Կորպաս Պաստոր, Է. Կոսերիու, Ս. Կարնետադ Մորե, Ա. Տրիստա Պերես, Ա. Նազարյան, Ա. Կուլին, Ն. Ամոսովա, Վ. Վինոգրադով, Պ. Բեդիրյան, Խ. Բադիկյան, Ա. Մուրվալյան, Ա. Սուքիասյան, Ս. Գալստյան, Ե. Գևորգյան, Գ. Ջահուկյան և այլք) կարծիքները դարձվածքի՝ որպես վերափոխատավորված ուրույն էգզակական միավորի վերաբերյալ:

**Երկրորդ գլուխը («Dios» (աստված) և «diablo» (սառանա) բաղադրիչներով դարձվածային միավորների կառուցվածքային առանձնահատկություններն իսպաներենում՝ հայերենի գուգադրությանամբ)՝** բաղկացած է երկու ենթագլխից:

**Առաջին ենթագլխում («Dios» (աստված) և «diablo» (սառանա) բաղադրիչներով դարձվածային միավորների ձևաբանական կաղապարների քննությանը)՝** նախ և առաջ փորձ է արվում հստակ տարանջատելու հաղորդակցական դարձվածային միավորները, այն է՝ նախադասություն-դարձվածքները, ոչ հաղորդակցականներից (գոյականական, ածականական, բայական, մակբայական, դերանվանական և այլն) և ձևաբանական վերլուծության ենթարկելու տվյալ դարձվածային միավորները: Սրա արդյունքում կարող ենք փաստել, որ իսպաներենի արդյունավետ կաղապարներում ստվար զանգված են կազմում բայական դարձվածային միավորները՝ ելնելով բայի կապակցելիության լայն հնարավորություններից<sup>1</sup>: Երկու քննվող էգզաներում մեծ թիվ են կազմում եղանակավորող դարձվածային միավորներն իրենց ստորոգումային և ոչ ստորոգումային տարբերակներով: «Dios» և «diablo» բաղադրիչներով կազմված կայուն կապակցությունները նախկինում գործածվել են իրենց ուղիղ իմաստով, այնուհետև մթագնել է այդ իմաստը, և այսօր դրանք պարզապես կատարում են խոսքը երանգավորելու դեր: Իրենց դարձվածակազմական արդյունավետությամբ իսպաներենում առանձնանում են նաև մակբայական դարձվածքները: Մեր վերլուծության արդյունքները ևս մեկ անգամ հաստատում են Խ. Կասարեսի այն միտքը, որ իսպաներենում մակբայի սակավության պատճառով

<sup>1</sup> Բեդիրյան Պ. Ս. Ժամանակակից հայերենի դարձվածաբանություն, Երևան, Լույս, 1973, էջ 187:

լեզու և համարվել է մակբայական դարձվածային միավորներով<sup>2</sup>: Իսկ հայերենում ակնհայտորեն գերակշռում է S+S կառուցվածքային-ձևաբանական կաղապարը, որը բնորոշ է գոյականական և ածականական դարձվածքներին:

**Երկրորդ ենթազև խում («Dios» (աւտլաւծ) և «diablo» (աւաւնաւ) բաղադրիչ ներով դարձվածային միավորների շարահյուսական կաղապարների բնութայ ուննն)** քննվում են առավել արդյունավետ շարահյուսական կաղապարները՝ վերհանելով իսպաներենի և հայերենի շարահյուսական առանձնահատկությունները, որոնք, չնայած որոշակի նմանություններին, զգալիորեն տարբերվում են: Քննվում է շրջուն շարահյուսությունը, որի դեպքում դարձվածքը երբեմն կարող է ձեռք բերել իմաստային որոշ նրբերանգներ՝ տարբեր համատեքստային միջավայրերում արտահայտելով տարբեր իմաստներ: Այն՝ որպես լեզվական երևույթ, բնորոշ է ինչպես իսպաներենի, այնպես էլ հայերենի շարահյուսական կաղապարներին:

Ի տարբերություն իսպաներենի, որը վերլուծական լեզու է և զուրկ է հոլովման հարացույցից, հայերենում միևնույն շարահյուսական կաղապարում գոյականը կարող է հանդես գալ տարբեր հոլովածներով:

**Երրորդ գլուխը («Dios» (աւտլաւծ) և «diablo» (աւաւնաւ) բաղադրիչ ներով դարձվածքների իմաստային կառուցվածքի առանձնահատկություններն իսպաներենում՝ հայերենի գուգադրությունայն)** բաղկացած է երեք ենթազև խից:

**Առաջին ենթազև խում («Իմաստային վերափոխման առանձնահատկություններն «dios» (աւտլաւծ) և «diablo» (աւաւնաւ) բաղադրիչ ներով դարձվածքներում)** քննությունն են առնվել դարձվածքների իմաստային կառուցվածքի խնդիրները, մասնավորապես դարձվածային միավորների իմաստային վերափոխումը՝ ըստ Ա. Նազարյանի առաջարկած դասակարգման սկզբունքների: Այստեղ կարևորվում է **իմաստային վերափոխում**<sup>3</sup> և **վերափոխատվորում**<sup>4</sup> հասկացություններին

<sup>2</sup> Касарес Х. Введение в современную лексикографию. М.: Высшая школа, 1958, с. 235.

<sup>3</sup> Դարձվածքի իմաստային վերափոխումը դարձվածային միավորի հիմնական տարբերակիչ հատկանիշն է, որը թույլ է տալիս առանձնացնել դարձվածքը ինչպես ազատ, այնպես էլ կայուն ոչ դարձվածային կապակցություններից: Ռուս դարձվածքաբան Բ. Ա. Լարինը *իմաստային վերափոխման* փոխաբերան առաջարկում է *իմաստային նորացում* (Ларин Б. А. Очерки по фразеологии. Л.: ЛГУ, 1956, с. 220):

<sup>4</sup> Դարձվածային վերափոխատվորումը ընկալվում է որպես ամեն մի իմաստային տեղաշարժ, որը հանգեցնում է դարձվածային միավորների բաղադրիչների կամ դրանց միմասի բուն իմաստների կորստին և նոր



տարանջատումը, դրանց տարբերակիչ արանձնահատկությունները, քննությունները, քանի որ երբեմն էգզվաբանական գրականության մեջ այս երկու հասկացությունները նույնացվում են: Այս ենթագլխում քննվում են նաև իմաստային վերափոխման մյուս տեսակները (դարձվածային միավորների բաղադրիչների բառային իմաստի թուլացում, հնարանություններ, գեղում, ժողովրդաստուգաբանական աղավաղում, իմաստի իրադրային ընդլայնում և բառակապակցության իմաստային գերած), որոնք խթանում են որակապես նոր էգզվական միավորների ստեղծումը: Իսպանագիտական աղբյուրներում դարձվածքների իմաստային վերափոխման տեսակները դեռևս հատուկ քննության արարկաչ են եղել: Մեր ուսումնասիրությունը ցույց է տալիս, որ դարձվածքների իմաստային վերափոխման վերոհիշյալ տեսակները հատուկ են նաև իսպանական դարձվածաբանությանը, և կարող են հիմք ծառայել իսպաներենի դարձվածքների իմաստային կառուցվածքի արանձնահատկությունները քննելիս: Յարկ է նաև նշել, որ միևնույն դարձվածային միավորը կարող է արաջանալ միաժամանակ իմաստային վերափոխման մի քանի տեսակի (սովորաբար երկու) արդյունքում: Օրինակ՝ իսպաներենում «llueve de Dios» դարձվածքը հանդես է գալիս միաժամանակ ինչպես դարձվածային միավորների բաղադրիչների բառային իմաստի թուլացման, այնպես էլ փոխաբերության տեսակ՝ ըստ երևույթների նմանության:

**Երկրորդ ենթագլխում («Dios» (առտված) և «diablo» (սարանա)**

**բաղադրիչներով դարձվածակազմական կաղապարները»)** կատարվել է «dios» և «diablo» բաղադրիչներով դարձվածքների իմաստային կաղապարների վերլուծությունն իսպաներենում՝ հայերենի գուգադրությամբ: Էգզվաբանական գրականության մեջ դարձվածքների կաղապարման խնդիրն արասօրջի դարձել խորը ուսումնասիրության արարկաչ, և այդ խնդրի շուրջ դեռևս գոյություն ունեն իրարամերժ տեսակետներ: Դարձվածքների իմաստային կաղապարման խնդրի լուծումն իրականում կախված է նրանից, թե ինչպես է ընկալվում տվյալ դարձվածային միավորը և ինչպե՞սնում է այն ուսումնասիրվում: Ինչպես դիտարկում է Ա. Նազարյանը, դարձվածային կաղապարներն անհրաժեշտ է ուսումնասիրել բացառապես նկարագրական պատկերում և ոչ թե սերող մեթոդական եղանակով<sup>5</sup>: Ահա թե ինչու

---

իմաստների ձեռքբերմանը, որն արկայանում է միայն տվյալ դարձվածքում:

<sup>5</sup> Назарян А. Г. Фразеология французского языка. М.: Высшая школа, 1987, с. 49-53.

գիտակցանալ ար խառու թյու ներում մ նմանատիպ հետազոտություններ կատարելիս ամառնային է բովանդակային պլանի ուսումնասիրությունը, որից հետո միայն անցում է կատարվում արտահայտությունների և պլանին: Այս ենթագլխում դարձվածակակցանալ կաղապարի ուսումնասիրություն մեջ էլ ակտիվ է ծանայել Ա. Ռայխշտեյնի ամառնային մեթոդը<sup>6</sup>, ըստ որի ամանձնացվել են թեմատիկ խմբեր, վեր են հանվել բաղադրակցանալ և իրարային կաղապարները, որոնց հանրագումարում ներկայացվել է դարձվածակակցանալ կաղապարը<sup>7</sup>: Տվյալ ենթագլխում թեմատիկ խմբերը երկուսն են՝ խորամանկություն («diablo» (սատանա) բաղադրիչով) և բարեմաթություն («dios» (աստված) բաղադրիչով)՝ իրենց բառիմաստային դաշտերով: Նշված թեմատիկ խմբերի իմաստային կաղապարումը ներկայացվում է երկու աղյուսակի տեսքով:

**Երրորդ ենթագլուխը («Բազմիմաստություն, հոմանիշություն և տարբերակայնություն համակարգային կապերը «dios» (աստված) և «diablo» (սատանա) բաղադրիչներով դարձվածքներում»)** նվիրված է «dios» և «diablo» դարձվածային միավորների բազմիմաստություն, տարբերակայնություն<sup>8</sup> և հոմանիշություն<sup>9</sup> խնդրի լուսաբանմանը: Սույն ենթագլխում բազմիմաստությունը գուգահեռ ուսումնասիրվում է նաև իմաստային լայն ծավալ ունեցող դարձվածքների խնդիրը և փորձ է արվում տալ հստակ սահմանազատում տվյալ լեզվակցանալ երևույթների միջև: Տարբերակայնությունը համարելով որպես լեզվի անկայնություն, ներքին փոփոխություն ու շարժիվառ դրսևորում՝ այստեղ քննում ենք նրա կարևոր հատկանիշները, «dios» (աստված) և «diablo» (սատանա) բաղադրիչներով դարձվածքների իմաստային դաշտերում ամանձնացումը դարձվածային տարբերակների հետևյալ

<sup>6</sup> Райхштейн А. Д. Сопоставительный анализ немецкой и русской фразеологии. М.: Высшая школа, 1980, с. 61-66.

<sup>7</sup> Բաղադրակցանալ անփոփոխակցումի շարք բառախմբերի բաղադրակցանալ իմաստների ընդհանրացումն է: Իրարային անփոփոխակցումի շարք բառախմբերի իրարային լուսնադարձություն ընդհանրացումն է: Իսկ դարձվածակիմաստային անփոփոխակցումի շարք դարձվածային միավորների իմաստների ընդհանրացումն է:

<sup>8</sup> Դարձվածային տարբերակները լեզվաբանակցանալ գրակցանություն մեջ հայտնի են նաև որպես նույն իմաստ դարձվածային միավորներ, որոնք տարբերվում են բազմիմաստներից այն տարբերակիչ հատկանիշով, որ նույն դարձվածքի տարբեր ձևերն են և արտահայտում են միևնույն իմաստը:

<sup>9</sup> Դարձվածային հոմանիշները ընդհանուր իմակով (գերիմակով) փոխկապակցված դարձվածային միավորներ են, որոնք աչքի են ընկնում իրենց ուրույն իմաստային և ոճական ամանձնահատկություններով:

տիպերը՝ կառուցվածքային-քերականական տարբերակներ (իրենց երկու ենթատեսակներով՝ ձևաբանական (qué diablo/ qué demonio/ qué diablos/demonios (գրողը տանի) - գոյականական բաղադրիչի եզակի և հոգնակի թվի կիրառության ամբ և դիրքային (Dios sabe/ Sabe Dios, Փառք Աստծո/ Աստծուն վառք, բառային (Idear con el demonio/ Inventar con el demonio), ոճական (Entregar el alma a Dios/ Entregar la osamenta a Dios (հոգին ավանդել, մահանալ)) և քանակական (No es Dios viejo/ No se ha muerto Dios de viejo (ոչինչ կորած չէ, ամենինչ դեռ առջևում է)) տարբերակներ՝ վեր հանելով նրանց առանձնահատկություններն իսպաներենում՝ հայերենի գուգադրություն ամբ:

Դարձվածային ֆոնոլի հարստացման երրորդ միջոցը դարձվածային հոմանիշությունն է, որը երբեմն նույնացվում է դարձվածային տարբերակի հետ: Դարձվածային տարբերակի և դարձվածային հոմանիշի գլխավոր տարբերակիչ հատկանիշն այն է, որ դարձվածային հոմանիշները կառուցվում են տարբեր պատկերների հիման վրա, այսինքն՝ առաջանում են տարբեր աղբյուրներից: Մեր լեզվանյութում, ելնելով Վ. Ս. Վինոգրադովի դասակարգումից, մենք առանձնացրել ենք. ա) տարբեր բառային կազմ և քերականական կառուցվածք ունեցող, բ) մերձավոր կառուցվածք և մասնակիորեն նման բառային կազմ ունեցող և գ) ընդհանուր բաղադրիչ և նմանատիպ շարահյուսական կառուցվածք ունեցող դարձվածային հոմանիշներ<sup>10</sup>:

**Չորրորդ գլուխը («Dios» (աստված) և «diablo» (սառնակ) բաղադրիչներով դարձվածային միավորների ազգամշակութային առանձնահատկություններն իսպաներենում՝ հայերենի գուգադրություն ամբ»)** բաղկացած է երեք ենթագլխից:

**Առաջին ենթագլխում («Ջամընդհանուրի և ազգայինի դրսևորումները դարձվածքներում»)** քննվում են համընդհանուրի (օրինակ՝ Dar a Dios lo que es de Dios y dar a César lo que es de César - Աստծունը՝ աստծուն, կայսրինը՝ կայսրին; Dios delante - Աստված առաջ, Dios sabe/ sabe Dios - Աստված գիտի, Dios guarde - Աստված պահապան) և ազգայինի (օրինակ՝ Están peleando el diablo y la diablo, el diablo se está riendo – թեթև անձրևում է) դրսևորումները, ընդգծվում են դարձվածային միավորներում խոսքած՝ տվյալ ժողովրդի մշակույթին և ազգային մտածելակերպին բնորոշ տարրերը:

**Երկրորդ ենթագլխում («Dios» (աստված) բաղադրիչով դարձվածային միավորների ազգամշակութային**

<sup>10</sup> Виноградов В. С. Лексикология испанского языка. М.: Высшая школа, 2003.

**առանձնահատկությունները»**) քննվում է «dios» (աստված) հասկացությանը՝ որպես կարևորագույն մշակութային ընդհանրության իսպաներենի դարձվածապաշարում՝ հայերենի գուգադրության մեջ: Արարչի վերաբերյալ տվյալ է լեզվամշակույթներից յուրաքանչյուրը, ելնելով կրոնական առանձնահատկություններից, ստեղծում է իր ուրույն պատկերը: Իսպաներենի լեզվամշակույթում, ինչպես նաև հայերենում ակնհայտ է Ամենաբարձրյալի պաշտամունքը: Արարիչ, Ամենաստեղծ կամ Երկնային արքա հասկացություններից բացի, ինչու է դրվում նաև աստծո՝ հասարակ մարդ լինելու և մարդկային բուրք հատկանիշներով օժտված լինելու գաղափարը:

Դեռևս հնուց ակնհայտ է բնության երևույթների նկատմամբ մարդափոխաբերականացման (անտրոպոմորֆիզացիա) միտում, հետագայում այն կիրառվել է նաև գերբնական, աստվածային էակների նկատմամբ: Մեր աշխատանքում «dios» բաղադրիչով դարձվածային միավորները նույնպես դասակարգվում են՝ ըստ աստծուն բնորոշ մարդկային հատկանիշների՝ լսողություն, տեսողություն, խոսք, հիշողություն, կամք, շնայություն, արդարամտություն և այլն<sup>11</sup>:

Իսպանացիների կողմից Քրիստոսը երբեմն ընկալվում է որպես հասարակ մարդ (օժտված մարդկային բուրք հատկանիշներով), որի հետևանքով նրա անունը հաճախ է հանդիպում առօրյա խոսակցական տարբեր դարձվածային միավորներում (օրինակ՝ Como a un cristo dos pistolas – շատ վատ): Նման դեպքերում այն այլևս չի ընդգծում աստծո գաղափարը, այլ վերածվում է հասարակ անվան (նաև «խաչելություն» իմաստով) և նույնիսկ գրվում է փոքրատառ: Օրինակ՝ Ni cristo padre (ոչ ոք), Ni cristo lo apea (նրան չես կարող համոզել):

**Երրորդ ենթազվիտում («Diablo» (սատանա) բաղադրիչով դարձվածային միավորների ազգամշակութային առանձնահատկությունները»**) քննվում է «diablo» (սատանա) միավորը իսպաներենի դարձվածապաշարում և արժարժվում են այդ հասկացության վերաբերյալ պատկերացումները: Ըստ կրոնական միջարք ուսմունքների՝ այն համարվում է աստծո ու նրա հավատարիմ ուժերի գլխավոր հակառակորդը, չար ոգիների տիրակալ և ուղձախիթի թագավորը, խավարի իշխան և մահվան հրեշտակը: Տարբեր լեզվամշակույթներում սատանան սովորաբար հանդես է գալիս չար մարդու կերպարով, որին

<sup>11</sup> Арутюнян Н. Л. Лингвокультурологический анализ трансцендентных сверхконцептов. Ереван: Зангак, 2008, с. 135-142.

վերագրվում են մարդկային գրեթե բոլոր հատկանիշները: Տվյալ հատկանիշները դիտարկվում են նաև «diablo» (սատանա) բաղադրիչով դարձված ային միավորներում՝ Լսողություն, տեսողություն, խոսք, տգեղություն, խորամանկություն, համառություն, երկերեսանիություն և այլն: Ըստ մեր վերլուծության արդյունքների՝ սատանայի առաջին և ամենաբնորոշ հատկանիշը խորամանկությունն է: Այդ հատկանիշն առավել բնորոշ է հայերենի դարձվածային միավորներին, որոնց շարքում աչքի է ընկնում նույն հարանշանակությամբ օժտված կազմաբանական դարձվածքների մի սովորական զանգված:

Իսպաներենի դարձվածաբանական ֆոնդում սատանան հաճախ հանդես է գալիս իր հոմանիշային հարուստ շարքով (Demonio, Satanás, Barrabas, Lucifer)՝ միաժամանակ նպաստելով դարձվածային տարբերակների առաջացմանը:

«Dios» և «diablo» բաղադրիչներն իսպաներենի դարձվածային միավորներում երբեմն հանդես են գալիս միասին և, ընդգծելով մարդկանց միջանձնային վատ հարաբերությունները, խոսքին հաղորդում են սաստկական բնույթ և ուրույն երանգավորում՝ Tan amigos como dios y el diablo, Como Cristo y Satanás:

Սույն վերլուծությունը փաստում է, որ «dios» (աստված) և «diablo» (սատանա) բաղադրիչներով կազմված դարձվածային միավորների մեծամասնությունը հիմնվում է փոխաբերության վրա, որը դարձվածային միավորների իմաստային վերափոխման միջոցներից և դարձվածքի գոյության նախապայմաններից է:

**Յինգերորդ գլխում («Dios» (աստված) և «diablo» (սատանա) բաղադրիչներով դարձվածային միավորների դիպլոմային փոխակերպումները խոսքում)** քննության են առնվում «dios» և «diablo» բաղադրիչներով դարձվածային միավորների փոխակերպումները տարբեր հեղինակների գեղարվեստական ստեղծագործություններում, որոնց միջոցով հեղինակը ընթերցողին է փոխանցում այս կամ այն տեղեկություն և միաժամանակ հարստացնում է լեզվի բառաֆոնդը՝ համալրելով դարձվածապաշարը փոխակերպման մի շարք նոր միջոցներով: Այլ կերպ՝ դիպլոմային փոխակերպումները թույլ են տալիս բացահայտել դարձվածքների լեզվախոսքային, ինչպես նաև դարձվածքի՝ իմաստային բովանդակությունը պահպանելու կամ փոփոխելու հնարավորությունները: Գեղարվեստական տարբեր ստեղծագործություններում «dios» (աստված) և «diablo» (սատանա) բաղադրիչներով դարձվածային միավորների դիպլոմային փոխակերպումներին ուսումնասիրության արդյունքում բացա-

հայ տվել են փոխակերպումների ինը տեսակ: Այսպես, օրինակ, դարձվածքի փոխակերպման լայն տարածում գտած միջոցներից է դարձվածային միավորների բաղադրիչների փոխարինումը: Յեղիևակը, ելնելով տեքստի ոճական առանձնահատկություններին, և փորձելով դարձվածային միավորները հարմարեցնել համատեքստի հաղորդակցական նպատակարարումներին, փոփոխության է ենթարկում դարձվածքի բառային կազմը՝ կարևորելով համատեքստային հարաբերությունները<sup>12</sup>: Օրինակ՝

**Bendito seáis Vos, Señor-** quedé yo diciendo-, que dais la enfermedad y ponéis el remedio (Anónimo, Lazarillo, p. 56)<sup>13</sup>.

.... porque los traía al retortero a todos, como dice el refrán de Castilla, y cada momento a los más agudos les **daba gato por demonio** (Luis Veles de Guevarra, Diablo cojuelo, p. 94)<sup>14</sup>.

Pues estando en tal aflicción, cual **plega al Señor** librar de ella a todo el fiel cristiano.... (Anónimo, Lazarillo, p. 42)<sup>15</sup>.

Y acuérdate de aquel refrán que dice: “**Al cielo rogando, y con el mazo dando**” (Miguel de Cervantes, La gitanilla, p.36)<sup>16</sup>.

Բերված օրինակներում **Dios** (աստված) բաղադրիչի փոխարեն որպես հոմանիշ հանդես են եկել **Señor** (Տեր) և **cielo** (երկինք) բաղադրիչները: **Señor-ը Dios** բաղադրիչի հասկացական հոմանիշն է, իսկ **cielo-ն՝** dios de los cielos դարձվածային միավորի կրճատ տարբերակը: Իսկ **dar gato por demonio** դիվածային փոխակերպման մեջ **liebre** (նապաստակ) բաղադրիչի փոխարեն հանդես է գալիս **demonio** (սատանա) բաղադրիչը՝ ստեղծելով նոր դարձվածային միավոր:

**Եզրակացություն** մեջ ի մի են բերվում մասնականության արդյունքները:

1. Ըստ քերականական (կառուցվածքային-ձևաբանական) վերլուծության արդյունքների՝ իսպաներենում, ինչպես նաև հայերենում, մեծաբանակ են «dios» (աստված) և «diablo» (սատանա) բաղադրիչներով կազմված եղանակավորող, հաղորդակցական և բայական դարձվածային միավորները: Ընդ որում՝ ամենամեծ կշիռն ունեն բայական դարձվածային միավորները, որոնք նախադասության մեջ բայ-բաղադրիչի ստորոգման շնորհիվ համեմատաբար ավելի անկախ գոյություն են ապահովում

<sup>12</sup> Corpas Pastor G. Manual de fraseología española, Madrid: Gredos, 1996, p. 246.

<sup>13</sup> Anónimo. Lazarillo de Tormes, Madrid: Salvat, 1970.

<sup>14</sup> Guevara L. V. El diablo cojuelo, Madrid: Susaeta, 1970.

<sup>15</sup> Cervantes M. La gitanilla, Madrid: Altamira, 1991.

<sup>16</sup> Anónimo. Lazarillo de Tormes, Madrid: Salvat, 1970.

խոսքում՝ ձեռք բերելով հաղորդակցական արժեք: Իսկ ըստ կառուցվածքային-շարահյուսական վերլուծության՝ «dios» (աստված) և «diablo» (սատանա) բաղադրիչներով շարահյուսական կաղապարները բնութագրվում են որոշակի տարբերակիչ հատկանիշներով, որոնք հիմնականում պայմանավորված են իսպաներենի շարահյուսական համակարգի առանձնահատկություններով:

2. Ըստիմաստային վերլուծության արդյունքների՝
  - ա) «Dios» (աստված) և «diablo» (սատանա) բաղադրիչներով դարձվածքներում բացահայտվել են իմաստային վերափոխման հետևյալ տեսակները՝ վերափոխման տարատեսակներով, դարձվածային միավորների բաղադրիչների բառային իմաստի թուլացում, գեղջում, հնարանություններին առկայություն, իմաստի իրարային ընդլայնում, բառակապակցության իմաստային գերաճ, որոնք իսպաներենում առանձնանում են դարձվածակազմական տարբերարդյունավետությամբ:
    - բ) Իմաստային կաղապարման խնդիրը նկարագրական պլանում չի համարվում լեզվի ողջ դարձվածապաշարին ներհատուկ համընդհանուր երևույթ: Սակայն ինչպես ցույց է տալիս «խորամանկություն» և «բարեմադթություն» դարձվածափոխման խմբերի իմաստային կաղապարման ուսումնասիրությունը, իսպաներենում հնարավոր է առանձնացնել որոշակի կաղապարներ, որոնք միջլեզվական մակարդակում հանդես են գալիս որպես դարձվածային ընդհանրություններ:
    - գ) «Dios» (աստված) և «diablo» (սատանա) բաղադրիչներով դարձվածային միավորները կարող են հարաբերակցվել բազմիմաստություն, տարբերակայնության ու հոմանիշության հարաբերություններով, որոնք դարձվածքների իմաստային կառուցվածքի համակարգային հարաբերություններն արտացոլող ընդհանրություններ են և ծառայում են լեզվի դարձվածային ֆոնդի հարստացմանը:
3. Որպես ազգամշակութային միավորներ՝ «Dios» (աստված) և «diablo» (սատանա) բաղադրիչներով դարձվածքները պատկանում են դարձվածապաշարի այն շերտին, որտեղ ներդաշնակորեն միահյուսվում են ազգային ու համընդհանուրը: Ընդ որում՝ ազգային առանձնահատկությունները պայմանավորված են Արարչի և

սատանայի վերաբերյալ իսպանական, ինչպես նաև հայ  
լեզվահամայնքների աշխարհընկալման և  
աշխարհաճանաչողության տարբերություններով:

4. Իսպաներենի լեզվամշակույթում, ի տարբերություն և  
հայերենի, «dios» (աստված), «Cristo» (Քրիստոս) և «diablo»  
(սատանա) հասկացությաները մեկնաբանվում և ընկալվում  
են յուրովի, քանի որ յուրաքանչյուր լեզվակա  
համայնք Արարչի և սատանայի վերաբերյալ ունի իր  
ուրույն պատկերացումները: Սակայն աստծու կերպարը,  
ինչպես և քրիստոնեության ողջ փիլիսոփայությունը  
խորապես ամրակայված է երկու լեզուների  
լեզվամշակույթում, մասնավորապես՝ դարձվածա-  
պաշարում, որտեղ «աստված» բաղադրիչով  
դարձվածքներում ամանձնանում են հետևյալ  
գաղափարները. Աստված Արարիչ է, Աստված ամենակարող է,  
Աստված ամենազգետ է, Աստված գթասիրտ է, Աստված է  
պարգևում հավերժական կյանք և մխիթարում մեզ,  
Աստված մեր Տերն է, Աստված արդար է, Աստված է  
սահմանում բարոյականության օրենքները: Երկու  
լեզվամշակույթում էլ «աստված» բաղադրիչով  
դարձվածքները հաճախ օգտագործվում են որպես  
սասուկական-հուզարտահայտչական երանգավորում  
ունեցող կայուն կապակցություններ, որոնք  
արտահայտում են ինդրանք, ցանկություն,  
բարեմաղթանք, նաև անեծք, սպառնալիք և այլն:
5. Իսպաներենին, ինչպես նաև հայերենին, հատուկ են «dios»  
(աստված) և «diablo» (սատանա) բաղադրիչներով կազմված  
մարդավորական (անտրոպոմորֆիկ) դարձվածային  
միավորները, որոնք ընդգծում են աստծո՝ հասարակ  
մարդիկ ներքին գաղափարը:
6. Դարձվածային փոխակերպումները կարող են տեղի  
ունենալ ինչպես լեզվի, այնպես էլ խոսքի  
մակարդակում: Դարձվածային միավորների ձևախախտման  
հիմնական նախադրյալը վերջիններիս իմաստային  
ամբողջականության և դրանց բաղկացուցիչ տարրերի  
տարակազմության միջև գոյություն ունեցող  
հակադրությունն է, որը ենթադրում է խոսքում  
դարձվածային միավորների տարատեսակ  
ձևախախտումների հնարավորություն: Դարձվածային  
փոխակերպումները խոսքային տարբեր  
իրարդրություններում խոսքին հաղորդում են  
հուզարտահայտչականություն և ոճական տարբեր  
նրբերանգներ:



7. Գեղարվեստական տարբեր ստեղծագործություններում «dios» (աստված) և «diablo» (սատանա) բաղադրիչներով դարձված ային միավորների դիվիդուան տարբեր փոխակերպումների ուսումնասիրության արդյունքում տվյալ աշխատության մեջ բացահայտվել են փոխակերպումների հետևյալ տեսակները՝ դարձվածքի բաղադրիչների փոխարինում, դարձված ային միավորների զեղչված կիրառություն, դարձվածքի գուգամետություն, դարձվածքի կազմալուծում, դարձվածքի կազմի ընդլայնում կամ հավելադրում, բաղադրություն, կրկնակի առկայացում, անդրադարձ և փոփոխելի բաղադրիչների ներգրավում դարձվածքի կազմի մեջ:

Ուսուցման ախրու թյան հիմնադրու յ թներն արտացու ված են հետևյալ հրապարակու մներում.

1. Kubanyan A. Algunas particularidades semánticas de la palabra Dios en español y en armenio // Ռմանական բանասիրու թյան հանդես, Երևան, ԵՊՀ հրատ., 2008, № 8, էջ 172-175:
2. Kubanyan A. Análisis comparativo de los paradigmas fraseológicos con el componente “Dios” en español y en armenio // Ռմանական բանասիրու թյան հանդես, Երևան, ԵՊՀ հրատ., 2009, էջ 57-66:
3. Կուբանյան Ա. «Աստված» և «սատանա» բաղադրիչներով դարձվածային միավորների թարգմանու թյան խնդրի շուրջ // Թարգմանու թյան տեսական և գործնական հարցեր, Երևան, ԵՊՀ հրատ., 2011, էջ 144-148:
4. Կուբանյան Ա. «Սատանա» բաղադրիչով դարձվածային կաղապարների վերլուծու թյուն իսպաներենում և հայերենում // Օտար լեզուները Հայաստանում, հատ. 3, Երևան, ԿԱԻ հրատ., 2012, էջ 22-32:
5. Կուբանյան Ա. «Աստված» և «սատանա» բաղադրիչներով դարձվածքների իմաստային կառուցվածքի վերլուծու թյուն իսպաներենում և հայերենում // Ռմանական բանասիրու թյան հանդես, հատ. 10, Երևան, ԵՊՀ հրատ., 2013, էջ 127-135:
6. Կուբանյան Ա. Բազմիմաստու թյան, տարբերակայնու թյան և հոմանիշու թյան խնդիրները «Աստված» և «սատանա» բաղադրիչներով դարձվածային համակարգերում // Օտար լեզուները բարձրագույն դպրոցում, 1 (18), Երևան, ԵՊՀ հրատ., 2015, էջ 41-52:

The Semantic-Structural Characteristics of Phraseological Units with The Components "God" and "Devil" in Spanish (in Comparison with Armenian)

SUMMARY

The focus of the present research is the semantic-structural study of phraseological units with the components "God" and "devil" in Spanish in comparison with Armenian. By virtue of semantic, occasional, structural as well as national-cultural characteristic features, the above mentioned phraseological units convey expressiveness to the text.

The **aim** of the present study is to carry out a thorough analysis of phraseological units with the components "God" and "devil" on different levels of language, to study the phraseological transformations in Spanish discourse both from semantic and structural standpoints, to reveal the immanent semes proceeding from the communicative intention of the author of the text. To realize the mentioned objective, the following **tasks** have been put forward:

1. to give a survey of scientific approaches referring to the principles of the classification and perception of phraseological units with the components "God" and "devil" that can serve as a theoretical base for the study of our research,
2. to examine the structural morphological and syntactic patterns of Spanish phraseological units with the components "God" and "devil" in comparison with the corresponding patterns of Armenian,
3. to reveal the characteristic features of semantic transformations of phraseological units with the components "God" and "devil" in Spanish in comparison with Armenian,
4. to uncover, examine and compare the phraseologically formed semantic patterns with the components "God" and "devil" in Spanish and Armenian,
5. to study the systematic correlation of polysemy, variation and synonymy of phraseological units with the above-mentioned components in Spanish and Armenian,
6. to examine and disclose the national-cultural characteristics of phraseological units with the components "God" and "devil",
7. to study the possibilities of occasional transformations of phraseological units with the mentioned components in Spanish in the flow of speech in literary-fictional material.

To realize the mentioned objectives, we have applied the contextual-situational, contrastive, componential as well as statistical **methods** of analysis to our research.

The **novelty** of the research is the combined study of phraseological units with the components "God" and "devil" in Spanish and Armenian applying the scientific theories existing in the field of modern phraseology, the revelation of the efficiency of systemic possibilities of phraseological units with the components "God" and "devil" in a new light, the use of the method of semantic modeling of phraseological units and the examination of the way of manifesting the national and universal character of phraseological units with the components "God" and "devil" in both languages under investigation.

The **topicality** of the present research is determined by the correlation of the language and thought, the linguocultural and semantic-structural peculiarities of phraseological units and the great interest in problems referring to the changes of semantic content and the occasional variance.

From the **theoretical perspective** the results of the study are, undoubtedly, of great value and importance as they make it possible to import the results of the research in further examinations of different problems referring to Spanish phraseology, thus greatly contributing to the further development of typological and linguocultural theories of the mentioned languages. The results of the investigation have a significant **practical value** and can be implied in theoretical and practical courses of Phraseology, Lexicology, Semantics as well as in diploma and master research.

The **factual material** consists of phraseological units randomly collected from Spanish and Armenian monolingual and bilingual dictionaries, Internet as well as literature.

The paper consists of an introduction, five chapters divided into subchapters, a conclusion, a bibliography and two appendixes. Some chapters of the work are supplied with additional explanations in the notes following each chapter.

**Introduction** presents the object of the study, its goals and objectives, the topicality and novelty, the theoretical and practical significance of the research as well as the methods applied. **Chapter One** provides an overview of relevant approaches and theories to the understanding of phraseology in linguistic literature in Spanish and Armenian. **Chapter Two** illustrates the structural characteristics in certain morphological and syntactic patterns of phraseological units with the components "God" and "devil" in Spanish in comparison with Armenian. **Chapter Three** presents a thorough analysis of semantic transformations of phraseological units with the components "God" and "devil" in Spanish and Armenian, reveals the national characteristic features of semantic modeling and uncovers the systematic correlation of phraseological units mentioned above. **Chapter Four** demonstrates the significant role of the national and the universal in phraseological units with the components "God" and "devil" decoding the national-cultural characteristic features as well as highlights the realias and universalias in both languages studied. **Chapter Five** provides a large-scale and scrupulous examination of occasional transformations of phraseological units with the components "God" and "devil" in Spanish in comparison with Armenian.

The **conclusion** presents the main findings of the research.

Семантические и структурные особенности фразеологизмов с компонентами “бог” и “черт” в испанском языке в сопоставлении с армянским

РЕЗЮМЕ

Данная диссертация посвящена изучению семантических и структурных особенностей фразеологизмов с компонентами “бог” и “черт” в испанском языке в сопоставлении с армянским. Благодаря семантическим, структурным, ситуативным, а также национально-культурным особенностям вышеуказанные фразеологические единицы придают контексту эмоциональную выразительность.

**Целью** работы является всесторонний анализ фразеологических единиц с компонентами “бог” и “черт” на разных уровнях языка, изучение фразеологических трансформаций в речи как с семантической, так и структурной точки зрения и выявление имплицитных сем, исходя из коммуникативного замысла автора текста.

С целью реализации указанных целей в работе поставлены следующие **задачи**:

а) подвергнуть всестороннему анализу научные подходы, касающиеся восприятия и классификации фразеологизмов, существующих в лингвистической литературе, которые могут послужить теоретической базой для данной диссертации,

б) провести анализ структурно-морфологических и синтаксических моделей фразеологических единиц в испанском языке в сопоставлении с соответствующими моделями в армянском,

в) рассмотреть особенности семантической трансформации фразеологических единиц с компонентами “бог” и “черт” в испанском языке в сопоставлении с армянским,

г) выявить, изучить и сравнить фразообразующие семантические модели с компонентами “бог” и “черт” в испанском и армянском языках,

д) проанализировать системные связи многозначности, вариативности и синонимичности фразеологических единиц с вышеуказанными компонентами в испанском и армянском языках,

е) рассмотреть и выявить национально-культурные особенности фразеологических единиц с компонентами “бог” и “черт” в испанском языке в сопоставлении с армянским,

ж) рассмотреть возможности ситуативной трансформации в речи фразеологических единиц с данными компонентами на базе богатого литературно-художественного материала.

В работе были применены следующие лингвистические **методы**: метод сопоставительного анализа, а также компонентного, контекстуального и статистического анализа.

**Научная новизна** исследования определяется всесторонним анализом фразеологических единиц с компонентами “бог” и “черт” в испанском в сопоставлении с армянским с применением научных теорий, существующих в современной фразеологии, выявлением эффективности системных возможностей фразеологических единиц с компонентами “бог” и “черт” в новом освещении, применением метода семантического моделирования фразеологических единиц,

выявлением проявлений национального и всеобщего во фразеологических единицах с компонентами “бог” и “черт” в двух изучаемых языках.

**Актуальность** работы обусловлена большим интересом к проблемам взаимосвязи языка и мышления, к проблемам структурно-семантических и лингвокультурных особенностей фразеологических единиц, к вопросам ситуативной вариативности и изменений в речи их семантического содержания.

Диссертация несомненно имеет большую **теоретическую значимость**, ее результаты могут использоваться в исследованиях в области испанской фразеологии, способствуя дальнейшему развитию типологических и лингвокультурологических теорий в рассматриваемых языках.

Работа имеет большую **практическую значимость**. Ее результаты могут применяться в рамках курсов по фразеологии, лексикологии, семасиологии испанского языка, служить отправной точкой при написании курсовых, выпускных и магистерских работ. Приложения могут быть полезны в практике лексикографической и переводческой работы.

**Фактический материал** состоит из фразеологических единиц извлеченных из одноязычных и двуязычных словарей испанского и армянского языков, а также, произвольно извлеченных из литературы.

Структура работы определяется логической последовательностью решения поставленных задач. Работа состоит из введения, пяти глав, заключения, библиографического списка и приложений.

Во **Введении** представлены предмет, цели, задачи, актуальность, научная новизна, теоретическая ценность и научная значимость и использованные методы. В **Главе I** представлен краткий очерк восприятия и классификации фразеологизмов в испанском и армянском языках. В **Главе II** изучаются особенности структурно-морфологических и синтаксических моделей фразеологических единиц с компонентами “бог” и “черт” в испанском языке в сопоставлении с армянским. В **Главе III** проводится тщательный анализ семантических трансформаций фразеологических единиц с компонентами “бог” и “черт” в испанском и армянском языках, выявляются национальные особенности семантического моделирования и системные отношения вышеуказанных фразеологических единиц. В **Главе IV** представлены проявления национального и всеобщего во фразеологических единицах с компонентами “бог” и “черт” в испанском языке в сопоставлении с армянским, а также выделяются реалии и универсалии в обоих рассматриваемых языках. В **Главе V** проводится глубокий и тщательный анализ ситуативных трансформаций фразеологических единиц с компонентами “бог” и “черт”.

В **Заключении** в обобщенной форме представлены основные выводы исследования.